Եվրոպայի խորհրդի
Նախարարների
կոմիտե

CM/ResCMN(2018)5

Բանաձև CM/ResCMN(2018)5
Հայաստանի Հանրապետության կողմից Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ

Ընդունվել է Նախարարների Կոմիտեի կողմից 2018 թվականի մայիսի 2-ին Նախարարների տեղակալների 1315-րդ հանդիպման ընթացքում

<u>Ոչ պաշտոնական թարգմանություն</u>

Նախարարների Կոմիտեն, ԵԽ ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) 24-ից 26-րդ հոդվածների դրույթների համաձայն,

Հաշվի առնելով Շրջանակային կոնվենցիայի 24-ից 26-րդ հոդվածների դրույթների համաձայն Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ Մշտադիտարկման կանոնները սահմանող 1997 թ. սեպտեմբերի 17-ի (97)10 բանաձևը,

Հաշվի առնելով (97)10 բանաձևի ընդունման համատեքստում հաստատված քվեարկության կանոնները[1],

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից 1998 թ. հուլիսի 20-ին ներկայացված վավերացման մասին փաստաթուղթը,

Վկայակոչելով այն, որ 2014 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի կառավարությունը փոխանցել է շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ իր չորրորդ պետական զեկույցը,

Ուսումնասիրելով 2016թ. մայիսի 26-ին հաստատված Խորհրդատվական կոմիտեի Հայաստանի մասին 4-րդ կարծիքը,

Ընդունել է հետևյալ եզրակացությունները Հայաստանի Հանրապետության վերաբերյալ.

---

[1] 1997 թ. Սեպտեմբերի 17-ի Res(97)10 բանաձևի ընդունման համատեքստում Նախարարների կոմիտեի կողմից ընդունվել են նաև հետևյալ կանոնները՝ «Շրջանակային կոնվենցիայի 4.1 և 25.2 հոդվածներին համապատասխանող դրույթները պետք է հաստատվելու համար քվեարկության դրվեն, եթե Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների երկու երրորդը, այդ թվում՝ Նախարարների կոմիտեի նիստերի մասնակցելու իրավունք ունեցող Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչների մեծամասնությունը կողմ է քվեարկել»:

Հայաստանի իշխանությունները պետք է է հաշվի առնեն Խորհրդատվական կոմիտեի Հայաստանի մասին 4-րդ կարծիքի I-ին և II-րդ բաժիններում տեղ գտած առաջարկություններն ու հանձնարարականները: Մասնավորապես, Շրջանակային կոնվենցիայի դրույթների իրականացումը բարելավելու նպատակով, պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցները.

Անհապաղ գործողություններ պահանջող հանձնարարականներ[2].

- «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը և ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վրա ազդեցություն ունեցող այլ օրենսդրություն մշակելիս, լայնածավալ խորհրդակցություններ անցկացնել քաղաքացիական հասարակության և ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ, ապահովել այդ օրենսդրության՝ միջազգային չափանիշներին լիակատար համապատասխանությունը;
- Ցուցաբերել նախաձեռնողական մոտեցում՝ Շրջանակային կոնվենցիայի դրույթներին համապատասխան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը խթանելու համար, ապահովել, որ Շրջանակային կոնվենցիայի դրույթներով սահմանված իրավունքներից օգտվելուն առնչվող քաղաքականությունը մշակվի փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցության արդյունքում՝ նրանց իրական կարիքներն արտացոլելու նպատակով;
- Կրկնապատկել ջանքերը եզդի երեխաների՝ հատկապես աղջիկների առջև ծառացած՝ կրթության հասանելիության հետ կապված դժվարություններն անհապաղ վերացնելու համար, շարունակել բոլոր երեխաների համար նախադպրոցական կրթության ապահովմանն ուղղված ջանքերը, վերանայել օրենսդրությունը մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան՝ առանց ամուսինների գիտակցված համաձայնության, ճնշում կամ բռնություն գործադրելու միջոցով կնքված հարկադիր ամուսնությունները քրեականացնելու նպատակով;
- Խորհրդակցել ազգային փոքրամասնությունների տեղական ներկայացուցիչների հետ, գնահատելու համար վարչական մարմինների հետ շփումներում, ինչպես նաև մեծ թվով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակեցված աշխարհագրական տարածքներում, տեղագրական նշանները փոքրամասնությունների լեզուներով օգտագործելու անհրաժեշտությունը: Իրականացնել իրազեկության բարձրացմանն ուղղված արշավ՝ խրախուսելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում փոքրամասնությունների լեզուների օգտագործումը:

Այլ հանձնարարականներ

- ապահովել, որ հետագա մարդահամարների, ինչպես նաև այլ ձեաչափերով տվյալների հավաքագրման համար կիրառվեն համապատասխան ընթացակարգեր՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավիճակի վերաբերյալ հավաստի տվյալներ տրամադրելու նպատակով: Ապահովել մեկից ավելի էթնիկ

[2] Ստորև ներկայացված առաջարկությունները թվարկված են Շրջանակային կոնվենցիայի համապատասխան հոդվածների հերթականության համաձայն :

պատկանելություն նշելու հնարավորություն՝ կիրառելի միջազգային չափանիշներին համապատասխան :

Հնարավորություն ստեղծել՝ միջազգային կիրառելի չափանիշներին համապատասխան, հայտարարելու բազմակի էթնիկ ծագման մասին :

- խրախուսել փոքրամասնությունների տարբեր խմբերի միջև դրական հարաբերությունները, ստեղծել ու խթանել եզդի և քուրդ փոքրամասնությունների միջև երկխոսության հնարավորություններ:
- խորհրդակցելով Մարդու իրավունքների պաշտպանի հետ ապահովել, որ վերջինս ունենա անհրաժեշտ բոլոր ռեսուրսները իրականացնելու համար նոր գործառույթներն ու լիազորությունները, որոնք կարող են իրեն վերապահվել «Իրավահասարության ապահովման մասին» օրենքի շրջանակներում:
- նպաստել քրեական օրենսդրության վերանայմանը՝ ռասայական և այլ հիմքերով ատելության շարժառիթները բոլոր հանցագործությունների համար ծանրացուցիչ հանգամանք դարձնելու նպատակով, ընդունել համակարգչի միջոցով ռասիստական կամ քսենոֆոբ բնույթի նյութեր տարածելը կամ այլ ճանապարհով դրանք հասանելի դարձնելը և համացանցում ատելություն սերմանող արարքները քրեականացնող օրենսդրական դրույթներ, իրականացնել ատելություն սերմանող հանցագործության տարբեր ձևերի մասին բնակչության իրազեկման և տեղեկացվածության բարձրացման արշավներ և ստեղծել մատչելի մեխանիզմներ՝ ատելություն սերմանող հանցագործության մասին հայտնելու համար:
- ապահովել, որ ազգային փոքրամասնությունների մշակույթը և պատմությունը ներկայացվի և ուսուցանվի բոլոր դպրոցներում պատշաճ մակարդակով, այդ թվում՝ այն դպրոցներում, որտեղ հաճախում են մեծաթիվ ազգային փոքրմասնությունների խմբերին պատկանող երեխաներ, և որ դրանք արտացոլեն ազգային փոքրամասնությունների մշակույթների բոլոր ոլորտները՝ որպես հայ հասարակության անբաժանելի մաս:
- ապահովել հանրային ռադիոյի կողմից ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների շարունակունան պատրաստումն ու տարածումը՝ Շրջանակային կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն: Ընձեռել փոքրամասնությունների լեզուներով ռադիոհեռարձակման ու հեռուստահեռարձակման հնարավորություն, ինչպես նաև դիտարկել փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրավորումը որպես չափանիշ ռադիոհաճախականությունների և հեռուստատեսային ալիքների մասնավոր ընկերություններին տրամադրման ժամանակ:
- ապահովել Ընտրական օրենսգրքի ազգային փոքրամասնություններին առնչվող հոդվածների արդյունավետ իրականացումը : Ազգային փոքրամասնությունների մասին նոր օրենքով երաշխավորել անհրաժեշտ պայմաններ՝ ապահովելու հասարակական գործերում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց արդյունավետ ներկայացվածությունը: